Հավելված

Մասիս համայնքի ավագանու

2023 թ. փետրվարի 14 - ի N 09 - Ա որոշման

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ / ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ / ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները Մասիս համայնքի վարչական տարածքում կարող են գտնվել ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցիչների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 300 մետր հեռավորության վրա:

2. Անհատական բնակելի տների և /կամ/ հանրային սննդի օբյեկտների և /կամ/ հյուրանոցների, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերի և Մասիս համայնքի վարչական տարածքում գտնվող «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների միջև սույն որոշման 1-ին կետով սահմանված հեռավորությունը կարող է չպահպանվել անհատական բնակելի տան, հանրային սննդի օբյեկտի, հյուրանոցի և հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերի սեփականատերերի գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Աշխատակազմի քարտուղար՝ **Վ. Գաբրիելյան**

Առևտրի և գովազդի բաժնի պետ՝ **Մ.Առաքելյան**